ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

« 04 » Դեկտեմբերի 2017 թվականի N 35

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ 0.00652 ՀԱ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՅԼ 0.00189 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի 3-րդ կետի <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությանը համայնքի ավագանին՝

Որոշում է.

1.Համայնքի սեփականություն հանդիսացող արտադրական, նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության, ծածկագիր՝ 05-055-0050-0018, սեփականության իրավունքի վկայական N 29112017-05-0034, 1 փողոց թիվ 5/2 հասցեի 0.00652 հա և բնակավայրի նպատակային նշանակությամբ, այլ հողեր ՝ գործառնական նշանակությամբ, ծածկագիր `05-055-0050-0017 սեփականության իրավունքի վկայական N 29112017-05-0039, 1 փողոց թիվ 5/4 հասցեի 0.00189 հա հողատարածքները օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

2.Նշված տարածքների վաճառքի մեկնարկային գինը 1քմ համար հաստատել հողամասի կադաստրային արժեքի չափով ՝ 222 ՀՀ դրամ: Տարածքն ապահոված է ճանապարհով, հողամասի նկատմամբ այլ սահմանափակումներ՝ ներառյալ սերվիտուտներ չկան:

3.Տարածքի օտարման համար զանգվածային լրատվական միջոցներով հայտարարել մրցույթ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 04 » դեկտեմբերի 2017 թվականի N 36

ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Որոշում է.

Կատարել համայնքի 2017թ. տարեկան բյուջեի փոփոխություն՝
Ծախսային մաս
4221-ներքին գործուղումներ հոդվածից տալ 4729-օգնություն քաղաքացիներին հոդվածին 100000 ՀՀ դրամ,
4235-աուդիտորական ծառայություն հոդվածից տալ 4111-աշխատավարձ հոդվածին՝ 180000 ՀՀ դրամ,
4264-տրանսպորտային նյութեր հոդվածից տալ 4112-պարգևատրում հոդվածին 250000 ՀՀ դրամ,
4251-շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում հոդվածից տալ 4112-պարգևատրում հոդվածին 350000 ՀՀ դրամ,
4232-համակարգչային ծառայություններ հոդվածից տալ 4112-պարգևատրում հոդվածին 100000 ՀՀ դրամ,
4269-հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածից տալ 4112-պարգևատրում հոդվածին 155000 ՀՀ դրամ:
Որոշումն ընդունվել է.

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 04 » դեկտեմբերի 2017 թվականի N 37

Համայնքի բյուջեից դրամական օգնություն տալու մասին

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը համայնքի ավագանու քննարկմանը ներկայացրեց գյուղապետարան դիմած 8 քաղաքացիների դիմումները, որոնք հայտնել են, որ գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները սեփական միջոցներով չեն կարող լուծել, ԵԿՄ Վարդենիսի տարածքային բաժանմունքի գրությունը դրամական օգնության խնդրանքի մասին:

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությանը և տալ դրամական օգնություն համայնքի սոցիալապես անապահով 8 բնակիչներին՝ 175.0 հազար դրամ և ԵԿՄ Վարդենիսի տարածքային բաժանմունքին 25.0 հազար դրամ:
Որոշումն ընդունվել է՝

Կողմ-5, Դեմ-0, Ձեռնպահ-0

1.Հ.Ասատրյան
2.Ա. Ավետիսյան
3.Գ. Մանուկյան
4.Դ. Մկրտչյան
5.Ռ. Ռուբենյան

Համայնքի ղեկավար՝ Տ. Քոչարյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան